## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ՀԵՌԱԳԻՐ

Երուսաղէմ, 30 Սեպտեմբեր 1982

Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին

Ձերդ Սրբութեան գահակալութեան եւ օծման 27րդ Տարեդարձին ուրախ առիթով, հաճեցէք ընդունիլ մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Սաղիմահայ համայնքի ջերմագին շնորհաւորութիւնները, երկար ու երջանիկ օրերու լաւագոյն բարեմաղթութիւններով հանդերձ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ–ԲԵՄԱԿԱՆՔ

● *Շբ. 4 Սեպտ.* — Է. օր Վերափոխման: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Աբղ. Քէշիշեան:*

● *Կիր. 5 Սեպտ.* — Ը. օր Վերափոխման: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան Երաշխաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան:*

● *Բշ. 6 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:*

● *Գշ. 7 Սեպտ.* — Ս. Յովակիմայ եւ Աննայի: *Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովակիմի գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Աբղ. Գալայճեան:*

● *Շբ. 11 Սեպտ.* — Ս. Թովմայի առաքելոյն: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:*

*— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Հմայեակ Եպս.:*

● *Կիր. 12 Սեպտ.* — Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Աբղ. Ոդիքեան: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Հմայեակ Եպս. Ինգոյեան:*

● *Շբ. 18 Սեպտ.* — Նիկիոյ Ս. Ժողովոյն (325): *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Աբեղայ:*

● *Կիր. 19 Սեպտ.* — Բարեկենդան Ս. Խաչի պահոց: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վազգէն Աբղ. Գարայեան, որ խօսեցաւ իր անդրանիկ քարոզը՝ «Ես եմ յարութիւն և կեանք» բնաբանով:*

● *Բշ. 20 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Հմայեակ Եպս.:*

● *Գշ. 21 Սեպտ.* — Ծնունդ Ս. Աստուածածնի: *Առաւօտուն, Գերշ. Տ. Հմայեակ Եպս. Ինգոյեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և «Օրհնեալ ես դու ի կանայս» բնաբանով քարոզեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:*

● *Շբ. 25 Սեպտ.* — Տօն Եկեղ. ի նաւակատիս Ս. Խաչին: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան (Փարիզէն ժամանած):*

*— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին, որմէ ետք Կենաց Փայտի մասունքը թափօրով փոխադրեց Աւագ Խորան: Յետոյ Միաբանութիւնը երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:*

*— Իրիկնադէմին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ընկեցէք» և* Հսկման *կարգերուն նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:*

● *Կիր. 26 Սեպտ.* — ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ (129): *Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան և քարոզեց խաչի խորհուրդին շուրջ, բնաբան ունենալով «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Ըստ սովորութեան, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ազգիս և Ս. Աթոռոյս բարերար Մելգոնեան Եղբարց հոգիներուն համար: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:*

*— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»ին:*

● *Բշ. 27 Սեպտ.* — Յիշատակ մեռելոց: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Ապա կատարուեցաւ հանգստեան կարգ, նախ Մայր Տաճարին մէջ և յետոյ գաւիթը՝ Տ. Կիւրեղ Բ. Պտրք. Հօր շիրիմին վրայ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեան:*

digitised by A.R.A.R.@

● Շբ. 2 Հոկտ. — Տօն Խաչի: ԻԷ. Տարեդարձ Գահակալութեան Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին Ամենայն Հայոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերին մատուռին մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Աբղ. Շէրպէթճեան։

● Կիր. 3 Հոկտ. — Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան։

● Ուր. 8 Հոկտ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Շբ. 9 Հոկտ. — Ս. Գէորգայ զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց վանքի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Աբղ. Գալայճեան։ Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտոց Հոգշ. Տեռշէնի։ Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու Նախատօնակը մեր վերնատան մէջ, Նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազանին։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարին մէջ։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Վանիկ Աբղ.։

● Կիր. 10 Հոկտ. — Տօն Վարագայ Ս. Խաչին (660): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ապա, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեան մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց, բացատրելով իմաստն ու խորհուրդը օրուան տօնին։ Ս. Պատարագէն ետք, Գերշ. Սրբազանը նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.ի օծման 27րդ տարեդարձի առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանքի» արարողութեան։

● Շբ. 16 Հոկտ. — 72 աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ներքին գաւիթը՝ Ս. Գէորգայ սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Աբղ.։

● Կիր. 17 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան։

— Այսօր կատարուեցաւ Ռեմլէի Ս. Գէորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը։ Պատարագեց Հոգշ. Տ. Համբարձում Աբղ. Քէշիշեան։ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան քարոզ մը խօսեցաւ, ներկայացնելով Ս. Գէորգի անվեհեր կեանքն ու մարտիրոսութիւնը։ Ներկայ էր բաւական թիւով ժողովուրդ, Երուսաղէմէն, Եաֆայէն և Հայֆայէն, ինչպէս նաև նախորդ օր Ս. Աթոռ ժամանած Ամերիկահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան։

● Ուր. 22 Հոկտ. — Թարգմանչաց հանդիսաւոր Նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Շբ. 23 Հոկտ. — Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական): Ըստ նոր սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ հանդիսաւորապէս պատարագեց Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի Տեսուչ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեանը և քարոզեց օրուան տօնելի սուրբերու մեծ գործի մասին։ Ըստ սովորութեան, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ազգիս և Ս. Աթոռոյս մեծանուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի և իր պարագայից հոգիներուն համար։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան։

● Կիր. 24 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Աբղ. Մանկասարեան

● Շբ. 30 Հոկտ. — Ս. Զօրաց Աւետարանչացն: Այս տարի եւս, Ս. Յարութեան Տաճարի Նորոգութեանց պատճառաւ, փոխան գաւթի Ս. Յովհ. Աւետարանչի մատրան. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Արփիար Աբղ. Տէմիրճեան։

● Կիր. 31 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վազգէն Աբղ. Գարայեան։

● Բշ. 1 Նոյմ. — Ս. Յովսէփայ Աստուածահօրն Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ։ Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Աբղ. Գալայճեան։

● Շբ. 6 Նոյմ. — Երկոտասան վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։ Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. կիսասարկաւագութեան աստիճան շնորհեց Ժառանգ. Վարժարանի բարձրագոյն կարգի 5 սաներուն՝ Դաւիթ Եալըչեանի, Շահին Էօզտէմիրեանի, Սարգիս Գօյաճեանի, Սուրէն Ներսէսեանի և Վաչէ Թաւլաքեանի, ինչպէս նաև Վարժարանի Փոխ-Տեսուչ Տիար Ալեքս Գալայճեանի։

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ի հանդիսութեամբ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար։ Ս. Գերեզմանի և Խաչգիւտի այրի ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և Նախատօնակ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Համբարձում Աբեղայ։

● Կիր. 7 Նոյմ. — Գիւտ Խաչ (326): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի

digitised by A.R.A.R.@

Ս. Լուսաւորիչ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արք. Գալայճեան։ Ապա կազմուեցաւ մեծահանդէս թափօր, որ նախ իջաւ Խաչգիւտի այրը, և ապա բարձրանալով Ս. Գեթսեմանին շրջափակը՝ երիցս դարձաւ անոր շուրջ և ապա ելաւ Պատանատեղի։ Թափօրը կը գլխաւորէր Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., որ ամպհովանիի տակ, կենաց Փայտի մասունքով կ'օրհնէր Տաճարը խռնուած բազմութիւնները։ Ս. Գեթսեմանի դրան երգուած «Խաչի քո Քրիստոսէն» ետք Թափօրը իջաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, ուր փակուեցաւ հանդէսը։

● Շբ. 13 Նոյմ. — Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Գալէեան։

● Կիր. 14 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան։

● Ուր. 19 Նոյմ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Շբ. 20 Նոյմ. — Տօն Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վազգէն Արք. Գարայեան։ Ըստ սովորութեան, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Ս. Աթոռոյս բարերարուհի Աղաւնի Ճէվահիրճեանի և պարագայից հոգիներուն համար։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան։ Ապա Միաբանութիւնը պատուասիրուեցաւ վանուց Տեսչարանը՝ Տեսուչ Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեանի կողմէ։

● Կիր. 21 Նոյմ. — Նոյն եկեղեցւոյ մէջ պատարագեց, ըստ սովորութեան, Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան։

● Շբ. 27 Նոյմ. — Առաք. Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

● Կիր. 28 Նոյմ. — Բարեկենդան Յիսնակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր դարձեալ Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ.։

● Ուր. 3 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Շբ. 4 Դեկտ. — Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրերը ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և «Օրհնեալ ես դու ի կանայս» բնաբանով քարոզեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը։ Ըստ սովորութեան, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ազգին և Ս. Աթոռոյս բարերար Սիւլապի Կիւլպէնկեանի և իր գերդաստանին համայն ննջեցելոց հոգիներուն համար։

— Կէսօրէ ետք ժամը 3.30ին, բացառիկ կարգադրութեամբ և Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառով» մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Կիրակմուտքի ժամերգութիւնը կատարուեցաւ մեր վերնատան մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Թորգոմ Սրբազանի։ Տնօրինական Սրբատեղեաց թափօրը գլխաւորեց Հոգշ. Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան։

● Կիր. 5 Դեկտ. — Ամերիկահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և խօսեցաւ կուռ քարոզ մը։

● Ուր. 10 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Թորգոմ Արք.։

● Շբ. 11 Դեկտ. — Առաք. Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ղևոնդ Ծ. Վրդ. Սամուրեան (Ամերիկայէն ժամանած)։

● Կիր. 12 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Լևոն Վրդ. Արէլեան (Գալիֆորնիայէն ժամանած)։ Հոգշ. Հայրը խօսեցաւ նաև բովանդակալից քարոզ մը։

● Շբ. 18 Դեկտ. — Նիկողայոսի եւ Գրիգորի Սքանչելագործացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ, երկու օր առաջ զուգադիպած Ս. Հարցն Եգիպտացւոց տօնին առիթով։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արք. Շէրպէթճեան։ Վերաբերումը կատարուեցաւ Ս. Նիկողայոսի սեղանին վրայէն, ի պատիւ Ս. Յակոբայ։

● Կիր. 19 Դեկտ. — Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ.։

● Գշ. 21 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Դշ. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրերը ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը։

● Ուր. 24 Դեկտ. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Շբ. 25 Դեկտ. — Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արք. Մանկասարեան։ Վերաբերումը կատարուեցաւ գաւթին մէջ Ս. Յակոբի նկարով շինուած շարժական սեղանին վրայէն։

● Կիր. 26 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Արք. Ոսդիքեան։

digitised by A.R.A.R.@

## ԳԱՃՏՕՆԱԿԱՆՔ

● Եշ. 9 Սեպտ. — Մոսկուայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Ն. Ս. Պիմէնի անուան տօնին առիթով, կէսօրէ առաջ, Ռուսաց եկեղեցւոյ մէջ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին և Մաղթանքին ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Սեւան և Տ. Ասպետ վարդապետներ։

— Երեկոյեան, նոյն առիթով Russian Compoundի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Պատր. Փոխ. Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. և Քարտուղար Տիար Գէորգ Հինդլեան։

● Բշ. 13 Սեպտ. — Առաւօտեան ժամը 8ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի 1982–1983 դպրոցական տարեշրջանին։

● Գշ. 14 Սեպտ. — Փարիզէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանեց Ս. Ուխտիս Միաբան Հոգշ. Տ. Միրայր Վրդ. Թաշճեան։ Մեկնեցաւ 15 օր ետք։

● Եշ. 23 Սեպտ. — Գերշ. Տ. Բաբգէն Եպս. Վարժապետեան վերադարձաւ Ամերիկա, ամիս մը հիւրաբար մեր մէջ անցընելէ ետք։

● Եշ. 30 Սեպտ. — Գերշ. Տ. Հմայեակ Եպս. Ինգոյեան վերադարձաւ Ամերիկա, ամիս մը հիւրաբար մեր մէջ մնալէ ետք։

● Բշ. 4 Հոկտ. — Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. և Տիար Գ. Հինդլեան ներկայ եղան Հրէից Սուքքօթի (Տաղաւարահարաց) տօնին առթիւ, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քօլլէքի կողմէ, Դաւթի բերդին ստորոտը գտնուող պարտէզին մէջ տրուած ընդունելութեան։

● Բշ. 11 Հոկտ. — Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան նշանակուեցաւ Դիւանապետ, փոխան Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի։ Գերաշնորհ Սրբազանը դասեր աւանդած է նաև զոյգ վարժարաններէն ներս։

● Գշ. 12 Հոկտ. — Երեկոյեան, Սպանիոյ ազգային տօնին առիթով, Սպանական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Եշ. 14 Հոկտ. — Ամերիկեան Նոր Ընդհ. Հիւպատոս Պր. Գրանտօն Կրօվ իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս։

● Ուր. 22 Հոկտ. — Երեկոյեան, Ն. Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին գահակալութեան 4րդ տարեդարձին առիթով, Նոթր-Տամի եկեղեցւոյն մէջ, Պապական Նուիրակին կողմէ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին և անոր յաջորդող ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.։

● Ուր. 19 Նոյմ. — Այս երեկոյ, Ֆրանչիսկեաններու Ս. Փրկիչ Մայր Եկեղեցւոյ մէջ սկսաւ շարքը եռօրեայ հանդիսութեանց, նշելու համար փակումը Ս. Ֆրանսիս Ասսիզացւոյ ծննդեան 800ամեակի յոբելինական տարւոյն և սրբացումը Ֆրանչիսկեան Հայր Սալվաթօր Լուլիի և իր ընկերակիցներուն (տես էջ 215)։ Ս. Պատարագը, հայերէն լեզուով, մատոյց տեղւոյս Հայ-Կաթոլիկ համայնքապետ՝ Գերյարգելի Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Ճատարեան։ Մեզմէ ներկայ եղան Գերշ. Տ. Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Տ. Սեւան և Ասպետ վարդապետներ։

● Շբ. 20 Նոյմ. — Երեկոյեան, նոյն առիթներով Պապական Նուիրակին կողմէ Իտալերէն լեզուով մատուցուած Ս. Պատարագին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Տ. Կիւրեղ և Դաւիթ Սրբազաններ։

● Կիր. 21 Նոյմ. — Կէսօրէ առաջ, Լատինաց Պատրիարք Մօնս. Պէլթրիթթիի, նոյն առիթներով և նոյն եկեղեցւոյ մէջ, հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց՝ Լատիներէն և Արաբերէն լեզուներով։ Արաբերէնով, մարտիրոսութեան գաղափարին շուրջ հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ համայնքի հովիւին փոխանորդ Հայր Ճօրճ Գուսթանի։ Այն հանդիսութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Արևմտ. Եւրոպայի Կաթող. Պատուիրակ և Փարիզի Առաջնորդ Գերշ. Տ. Սերովբէ Արքեպս. Մանուկեանի և Տիար Գ. Հինդլեանի, որոնք ապա ներկայ եղան Ֆրանչիսկեանց Կիւսթոտի կողմէ տրուած ճաշկերոյթին։

● Ուր. 26 Նոյմ. — Երկրէս մեկնած Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեանի տեղ Աւագ Թարգման նշանակուեցաւ Ս. Հրեշտակապետաց վանուց Տեսուչ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեանը։

● Եշ. 16 Դեկտ. — Երեկոյեան, Հրէից Խանուկայի և Քրիստոնէից մօտալուտ Ծննդեան տօներուն առիթով, Վսեմ. Քաղաքապետին կողմէ, Քաղաքապետարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Աւագ Թարգման Հոգշ. Տ. Սեւան Վրդ.։

● Բշ. 27 Դեկտ. — Կէսօրէ առաջ, Եւրոպացւոց Ս. Ծննդեան տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, շնորհաւորութեան գնաց Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին, Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթոտին, Պապական Նուիրակին և Անկլիքան Արքեպս.ին։ Իսկ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Կաթոլիկ և Բողոքական մանր յարանուանութիւններու հոգևոր պետերուն։

● Եշ. 30 Դեկտ. — Կէսօրին, տարեվերջի առիթով, Իսրայէլի Վսեմ. Նախագահ Իցհաք Նավօնի կողմէ, իր ապարանքին մէջ, քրիստոնեայ յարանուանութեանց հոգևոր պետերուն ի պատիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

digitised by A.R.A.R.@

# ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

**Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1982 տարւոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերուն եղած հետեւեալ բարեպաշտական նուէրները:**

1. — *Երուսաղէմաբնակ Տիկին Մարիամ Շէօհմէլեանէ՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի արտաքին երկու դռներու համար վարագոյրներ։*

2. — *Լոս-Անճէլըսէն Տիկին Ագնիւ Գիլէմճեանէ՝ կորփուրալ մը։*

3. — *Բեթղեհէմէն Այրի Տիկին Լուսածին Սեթոյեանէ՝ Հալէպի ձեռագործ վարագոյր մը Ս. Աստուածածնայ պատկերին համար։*

4. — *Պէյրութէն Օր. Մայտա Տարագճեանէ՝ Աւետարանի քանիչ մը։*

5. — *Երուսաղէմաբնակ Տիար Յակոբ Անդրէասեանէ՝ երկու յախճապակեայ աշտանակներ Ս. Գլխադրի գործածութեան համար։*

6. — *Երուսաղէմաբնակ Տիար Նազարէթ Տէր Վարդանեանէ՝ փիլոն մը եւ հինգ արծաթեայ ճարմանդներ Ս. Յակոբեանց Տաճարի գործածութեան համար։*

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Լուսարարապետ Ս. Աթոռոյ

## ԳԵՐՇ. Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԵՐ ՄԷՋ

*30 Նոյեմբեր, Երեքշաբթի մթնշաղին, Ս. Աթոռ ժամանեց Ս. Ուխտիս Միաբան եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի բազմամեայ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանը։ Իրեն կ'ընկերանային արտասահմանի, եւ ի մասնաւորի Միացեալ Նահանգներ, պաշտօնավարող հետեւեալ Միաբան Հայրերը.— Հոգշ. Տ. Վարուժան Ծ. Վրդ. Գասպարեան՝ Շիքակոյէն, Հոգշ. Տ. Լեւոն Վրդ. Արէլեան՝ Օքլէնտէն (Գալիֆ.), Հոգշ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան՝ Գանատայէն, Հոգշ. Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան՝ Փարիզէն, Հոգշ. Տ. Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան՝ Մարսէյլէն, Հոգշ. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Սամուէլեան՝ Լէքսինկթընէն, Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Այքազեան՝ Ժընեւէն, Հոգշ. Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան՝ Նիւ Եորքէն, Հոգշ. Տ. Մուշեղ Վրդ. Թաշճեան՝ Փասատենայէն (Գալիֆ.), Հոգշ. Տ. Հայկազուն Վրդ. Մելքոնեան՝ Հէյվըրհիլէն եւ Հոգշ. Տ. Եղնիկ Աբղ. Պալեան՝ Նիւ Եորքէն (Ուսանող Աստուածաբանութեան)։*

*Գերաշնորհ Սրբազանն ու իր հետեւորդները «Հրաշափառ»ով մուտք գործեցին Մայր Տաճար եւ կատարեցին իրենց ուխտը Ս. Գլխադրի մատրան մէջ։ Ապա, Առաջնորդ Սրբազանը, գաւթին մէջ, արտասանեց եկեղեցւոյ մուտքի աղօթքը։ Յետոյ բոլորն ալ, Միաբանութեան Սաղիմաբնակ անդամներուն հետ, Թափօրով բարձրացան Պատրիարքարան եւ ողջագուրուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հօր հետ։*

*Արտասահմանի Միաբանակից մեր Եղբայրները աւելի քան երկու շաբաթներ ապրեցան Ս. Աթոռոյս հովանիին տակ, հոգեւորապէս մխիթարուելով եւ իրենց ուխտի պատարագները մատուցանելով Տնօրինական Սրբավայրերու մէջ։ Միւսներէն առաջ, 20 Դեկտեմբեր, Երկուշաբթի առաւօտուն, Գերաշնորհ Սրբազանը վերադարձաւ իր պաշտօնատեղին։*

digitised by A.R.A.R.@